ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«25» 08 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000066

Ձեռնարկողը՝ *«Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊԸ*
Քաղաք Երևան, Թոթովենցի 12/28

Գործունեությունը՝ ***Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000066

<25> 08 2020թ.

Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«Թ.Ա.Հ.Գ ԳՐԻԳ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղ

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7-րդ կետի ա) ենթակետի՝ Ջրվեժ գյուղի մանկապարտեզի կառուցումը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում: ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզի կառուցման նախագծային աշխատանքների պատվիրատուն հանդիսանում է Ջրվեժի համայնքապետարանը:

«Թ.Ա.Հ.Գ ԳՐԻԳ» ՍՊ ընկերության կողմից նախագծված մանկապարտեզը կառուցվելու է Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի՝ 34-րդ փողոց հ. 9 հողամասում, բնակավայրի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակություն գոտում, կառուցապատումից ազատ հողատարածքում: Գործունեության համար նախատեսված տարածքը գտնվում է Ջրվեժ համայնքի հյուսիս-արևմտյան հատվածում՝ 1393.0-1397.0մ բացարձակ նիշերի սահմաններում: Համաձայն ուսումնասիրությունների արդյունքի դիտարկվող տարածքում գրունտային ջրերը մինչև 10.0 մ խորություններում բացակայում են, տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանները գնահատվում են բարենպաստ՝ շինարարական աշխատանքների իրականացման համար:

Մանկապարտեզի նախագծման աշխատանքների համար հիմք է հանդիսացել Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 19-ին տրված թիվ 60 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանքը/: Մանկապարտեզը նախատեսված է 190 երեխաների և 8 խմբերի համար:

Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 4.919 հա, որից մանկապարտեզի մասնաշենքերի կառուցապատման մակերեսը 2 121 ք.մ է, իսկ 2 749.3 ք.մ մակերեսով տարածք պետք է բարեկարգվի և կանաչապատվի: Մանկապարտեզի համալիրը ներառում է յոթ մասնաշենքեր, այդ թվում՝ վարչական, խոհանոցային, դահլիճային և չորս ուսումնական մասնաշենքեր: Մասնաշենքերը միմյանցից առանձնացված են հակասեյսմիկ կարերով, բացառությամբ՝ մեկ ուսումնական մասնաշենքի և վարչական մասնաշենքի, որոնք

նախագծված են որպես միասնական կոնստրուկտիվ համակարգեր: Բոլոր մասնաշենքերն ունեն տեխնիկական նկուղային հարկեր, բացառությամբ՝ խոհանոցային և դահլիճային մասնաշենքերի, որոնք նախագծված են միահարկ կառույցներ: Վերգետնյա հարկերի բարձրությունը կազմում է 3.0 մ, իսկ նկուղային հարկինը՝ 2.40 մ:

Երկհարկանի մասնաշենքերի տանիքները նախագծված են լանջավոր՝ հենված մետաղական տարրերի վրա, իսկ միահարկ մասնաշենքերինը՝ հարթ տանիքներով: Տանիքներում հաշվի են առնված կազմակերպված արտաքին ջրահեռացման լուծումները: Մանկապարտեղում հաշմանդամություն ունեցող երեխաների և այլ սակավաշարժ խմբերի համար արտաքին մուտքերում նախատեսվում են թեքահարթակներ, ինչպես նաև հարմարեցված սանհանգույցներ: Բոլոր մասնաշենքերում նախատեսված են առանձին մուտքեր՝ էվակուացիոն ելքերով:

Մանկապարտեզի արտաքին պատերը նախատեսված են բետոնե ամրանավորված բլոկներից, որը նախատեսվում է երեսապատել արտաքին երեսապատման սալերով: Էներգոարդյունավետության և ջերմամեկուսացման նպատակով, տեխնիկական լուծումների շրջանակում նախատեսված է՝ բոլոր պատերը արտաքինից ջերմամեկուսացնել 90մմ հաստությամբ հանքային բամբակով, հարթ տանիքները՝ 100մմ պենոպոլիստերոլով, իսկ ձեղնահարկերը՝ փքապերլիտե պարկերով:

Ուսումնական սենյակներում և դահլիճում նախատեսվում է վինիլային հատակ, վարչական շենքերում՝ լամինատե, իսկ մնացածն իրականացվելու է կերամո-գրանիտե սալերից: Ներքին հարդարման բոլոր աշխատանքներում օգտագործվելու են բացառապես բարձրորակ և էկոլոգիապես մաքուր նյութեր:

Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների շրջանակում նախատեսվում է մանկապարտեզի տարածքի 77.3 ք.մ մակերեսը ասֆալտապատել, իսկ 2 672 ք.մ մակերեսով տարածքում ստեղծել կանաչապատ գոտի /որից 1678 ք.մ մակերեսով տարածքում նախագծված է բացօթյա խաղահրապարակ և ստեղծվելու է սիզամարգ/: Համաձայն հայտով նախատեսված կանաչապատման լուծումների մնացած մասում կտնկվեն թվով 50 արժեքավոր ծառատեսակներ, մասնավորապես՝ թույաներ (14 հատ), ուռենիներ (5 հատ), եղևնիներ (13 հատ), գիհիներ (15 հատ) և թղկիներ (3 հատ), որոնց տեսակային կազմը որոշվել է Ջրվեժի համայնքապետարանի հետ համատեղ՝ հաշվի առնելով տեսականու բնակլիմայական պայմաններին հարմարվելու առանձնահատկությունները /համաձայն Ջրվեժի համայնքապետարանի 07.07. 2020թ. թիվ 01/01/977-20 գրության/:

Մանկապարտեզի ջրամատակարարումը կկազմակերպվի մանկապարտեզի տեղամասից մոտ 270 մ հեռավորությամբ անցնող համայնքային՝ d=150 մմ ջրագծից, իսկ կենցաղային կոյուղաջրերի հեռացումը՝ մանկապարտեզի դիմացով անցնող d=250 մմ համայնքային կոյուղագծին միացմամբ: Ջեռուցումը և տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել գազային ջրատաքացուցիչ երեք կաթսաների միջոցով՝ բնական գազի այրմամբ /«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի մասնաճյուղի կողմից տրամադրված տեխնիկական պայմանների համաձայն/:

Նախագծվող մանկապարտեզի տարածքից մակերևութային ջրերը նախագծային լուծումներով կհեռացվեն ինքնահոս եղանակով՝ տարածքի բնական թեքությունների հաշվին՝ հոսքերն ուղղելով դեպի տարածքի կանաչ գոտիներ:

Մանկապարտեզի էլեկտրասնուցումը կիրականացվի էլեկտական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանների (11/03/2020թ.) համաձայն, տարածքից 330 մ հեռավորությամբ անցնող էլեկտրական վահանից: Արևային էլեկտրաէներգիայի մատակարարման համար նախատեսված է 53.6 կվտ հզորության արևային վահանակ:

Գործունեության նախաշինարարական փուլում կիրականացվեն շինարարական հրապարակի կազմակերպման և կոմունիկացիաների վերատեղադրման և միացման

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

աշխատանքները; Աշխատանքների ընդհանուր տևողությունը գնահատվել է 672 օր /կամ մոտ 22 ամիս: Շինարարական աշխատանքների ընթացքում հողային աշխատանքների ծավալները ներառում են՝ հողային հանույթ/գրունտ՝ 5 400 խ.մ, հետլիցք՝ 3 700 խ.մ, հեռացվող գրունտ՝ 1700 խ.մ: Հողային հանույթից առաջացող, պահպանության ենթակա բերրի հողի ծավալը կկազմի 2348.3 խ.մ: Այն հատուկ միջոցառումներով ժամանակավոր կպահպանվի հատկացրված վայրում, հետագայում կօգտագործվի տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներում:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակն ապահովվելու է տեղամասին կից անցնող ջրագծից, օգտագործվելու է շինաշխատանքների կազմակերպման, շինհրապարակի ջրցանման, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի խմելու և կենցաղային կարիքները հոգալու համար:

Հայտում վերլուծվել է շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները և ռիսկերը՝ պայմանավորված շինարարական գործողություններով, որոնք կարող են արտահայտվել անօրգանական փոշու և այլ ծխագազերի արտանետումների առաջացմամբ, աղմուկի մակարդակի աճով, հողային ռեսուրսների վրա ազդեցությամբ և սոցիալական ազդեցություններով: Նշված ազդեցությունների մեղմմանը և/կամ բացառմանն ուղղված միջոցառումները ներառում են՝

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում, աշխատանքի անվտանգության և առողջության միջոցառումների ապահովում, ներառյալ՝ հակահրդեհային միջոցառումներ, բանվորական կազմի ապահովում՝ անվտանգության միջոցներով և սանիտարական պայմաններով,
- շինհրապարակում սորոն նյութերի (ավազ, խիճ, հողային հանույթ և այլն) ծածկում պաստառներով և շինարարական հրապարակի ջրցանում փոշու արտանետումների քանակը թույլատրելի նորմերի սահմանում պահելու նպատակով
- քսայուղերի և հեղուկ վառելիքի տարաների պահում հատուկ հիմքերի վրա (ավազե, մատաղական կամ բետոնե) և հանձնում նշված թափոնը վերամշակող լիցենզավորված կազմակերպությանը, բացառելու համար հողային ռեսուրսի վրա հնարավոր աղտոտման ռիսկը,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման ընթացակարգերի և միջոցառումներիև ապահովում,
- մեքենաների վառելիքի լիցքավորում և քսայուղերի փոխարինում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված կենտրոններում
- շինարական աղբի կանանոնավոր հեռացում համայնքային աղբավայրում, իսկ շինհրապարակում առաջացող կենցաղային թափոնների համար աղբամանների տեղադրում
- շինարարական մեքենաների երթերի սահմանում և բեռնատարերի տեղաշարժ՝ թափքի ծածկի առկայությամբ,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարից, իսկ բետոնաշաղախի բետոնախառնուրդի առաքում պայմանագրային հիմունքներով բետոնաշաղախային հանգույցներից,
- կառուցապատվող տարածքում ազդեցության ենթակա բերրի հողաշերտի պահեստավորում, հետագայում կանաչապատման աշխատանքներում օգտագործման նպատակով,
- նախագծով նախատեսված բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում /ծառատունկ և սիզամարգերի ստեղծման աշխատանքներ/

- մեքենա-սարքավորումների շահագործում աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում և աղմուկ առաջացնող գործողությունների ժամանակացույցի սահմանում:

Ենթածրագրի շրջանակում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը (առանց հարկերի) գնահատվել է **3 026.12** հազ. ՀՀ դրամ, որը հաշվի է առնված նախագծի ծավալաթերթերում (բացառությամբ ծառատունկի, որը նախատեսված է համայնքի ֆինանսական ներդրմամբ:) Բոլոր միջոցառումներն ամփոփվել են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Դրանց իրականացման արդյունավետությունը շինարարության փուլում կվերահսկվի տեխնիկական վերահսկման խորհրդատուի կողմից:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության: Փորձաքննության գործընթացին մասնակցել է նաև Կոտայքի մարզպետարանը, որի կողմից ներկայացված կարծիքը ևս հաշվի է առնվել

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է

- առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Ջրվեժի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ բետոնի և շաղախի տեղափոխումը շինհրապարակ իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բետոնաշաղախային հանգույցներից, մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:
- պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Թ.Ա.Հ.Գ ԳՐԻԳ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի մանկապարտեզի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Հ. Մկրտչյան